

և բովանդակ աւանը յուզման մէջ էր մտածելով՝ որ իրենցմէ մին Գաղղիոյ տան անդամ պիտի ըլլայ :

Մուրատ իշխանուհին արժանավայել կեանք մ'անցուց 'ի Գաղղիա : Իսկ դատերաց մին, դքսուհի Մուշիի, Եւգինէ կայսրուհւոյն սերտ մտերիմներէն էր երկար ժամանակ : Քանի մը տարիէ 'ի վեր մեռաւ Մուրատ իշխանը, 'ի Լոնտրո, և կինն ալ շատ չուշացաւ երթալու զինքը գտնելու : Իրենց 'ի Պորտէնդոն ունեցած տան մէջ ամենաղքատ ընտանիքն կը բնակին հիմա, և այն աստիճան խեղճութեան մէջ են որ կը սպասեն յանկարծական յաջողութեան մը, որով իրենց բաղձն շինուի :

ՍԱՄ ՀՕՐԵՂԲՕՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Աւելորդ է բացատրել ընթերցողաց թէ ո՞վ է « հօրեղբայրն Սամ » : այնչափ ծանօթ է նոր աշխարհին ազատութեան պատմութեան մէջ . մէկ բառով կրնանք զուրցել որ յիրաւի ճշգրիտ դադափար մ'էր Եանքիի՝ որդւոյ նոր Անգղիոյ, Պաղարիւն, սակայն լի իմաստութեամբ և շրջահայեցութեամբ, սիրող ընտանեկան կեանաց, անկախ, յարատուող, հօրեղբայրն Սամ նախ և առաջ բաղդունեցաւ երկրիս ամենէն աւելի ընդարձակ և ամենէն աւելի հարուստ աշխարհաց միոյն տիրապետելու :

Յետ ստանալու ընդարձակ ազատութիւն մը քաղաքական, ընկերական և կրօնական, այլ դադափար մը և նպատակ մը չունեցաւ, բայց եթէ մշակել այս երկիրը, նորա անբաւ հարատուութիւնները 'ի գործ դնել և պատրաստել զայն յարմար տեղի բնակութեան մեծ և երջանիկ ժողովրդեան մը : Այս գործին վրայ կ'աշխատի հարիւր տարիէ 'ի վեր և իւր աշխատանաց և քրտանց արդիւնք, մանաւանդ յիսուն տարի է, բովանդակ աշխարհ զարմացցին :

Կարծեմ թէ կը փափագին ընթերցողք իմանալ մի առ մի այս արդիւնք և յառաջադիմութիւնք, մանաւանդ վերջին յիսուն ամաց նշանաւոր պարագայք և դէպք, որուն՝ երկրիս ոչ մի ժողովրդեան յառաջադիմութեան պատմութեան մէջ կրնանք հանդիպիլ :

ՔՈՂԱՔՈՎԱՆ ԿՈՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Երբոր ամերիկեան գաղթականութիւնք ազատեցան անգղիական տիրապետութենէ և ձեռացուցին անկախ և ազատ դաշնակցութիւն մը, այս դաշնակցութիւնը կը կազմուէր յ 13 կառավարու

թիւններէ և Կամոց Կամաց նոր տէրութեանց ձևանալով և կազմուելով՝ զաշնակցութիւնը այնչափ մեծցաւ որ այսօրոտան օրս 38 տէրութիւնք և 11 երկիրներ կը բովանդակէ :

Այսչափ երկիրներ միանգամայն ինչպէս կը կառավարուին՝ որոնք թէ կլիմայով և թէ գիւղքով իրարմէ շատ տարբեր են և ոմանք Եւրոպայի տէրութիւններէն իսկ ամբողջ մեծեն՝ ի բաց առեալ զՌուսիա և ի նչ է անդեզ այն զաղտնիքը՝ որ առանց գժուարութեան միացեալ կը պահէ և անբաժան այնքան տարբեր լաճեր և միտումներ և զաղտնիքն այս է և ազգային շահուց վերաբերեալ խնդիրք՝ ազգային կառավարութիւնը կը կարգադրէ և իսկ պարզ տեղական խնդիրք՝ զաւտական կառավարութիւնը կը կարգադրէ :

Սա է հիմնական փէտը՝ որոյ վրայ հաստատուած է Միացեալ Նահանգաց բովանդակ քաղաքական շէնքը, և պէտք է ըսել, որ ՚ի շնորհ տեղայն ժողովրդեան բարեկարգութեան ցարդ այդ շէնքը մեծամեծ ցնցմունք չէ ընդունած բաց ՚ի միոյն՝ զոր կրեց քաղաքական պատերազմի միջոց :

Միացեալ Նահանգաց սահմանադրութիւնը ցարդ նոյն է՝ ինչ որ պատրաստեցին 1787 ին 13 գաղթականութեանց ներկայացուցիչք և Յրէնադրական իշխանութիւնը՝ կրկին ժողովոց ձեռքն է և խորհրդարանին և ծերակուտին :

Խորհրդարանը (House of Representatives) 365 անդամներէ կը բաղկանայ, ժողովրդեան համեմատական առաւելութեամբ ընտրուած յայլ և այլ գաւառաց և ներկայացուցչաց պաշտօնը երկու տարի կը տևէ և կրնան վերատին ընտրուիլ 25, 000 Փուլ տարեկան թոշակ ունին և ձրի ճանապարհորդելու իրաւունք :

Ծերակուտի անդամք 76 են, իւրաքանչիւք պատուէն երկու հոգի և պաշտօնին վեց տարի կը տևէ, և իրենց անկումը այնպէս կարգադրուած է՝ որ երկու տարին մէյնը ծերակուտին անդամաց երրորդ մասը նոր կ'ընտրուի : Ոչ եթէ ժողովուրդը՝ այլ իւրաքանակ իւր տէրութեանց երեսփոխանք կ'ընտրեն իրենց ծերակուտի անդամները :

Ծերակուտի անդամաց իշխանութիւնն աւելի ընդարձակ է և իւր հասանութիւնը «Կարկաւոր է՝ որպէս զի խորհրդարանին որտչած օրէնքները և վճիռները վաւերացուին ամենայն զաշնագրութիւնը ընդ արտաքին պետութիւնս՝ պէտք է վաւերացուին ՚ի ծերակուտէն՝ երեք մասանց առաւելութեամբ և զեսպանաց, թղթատանց պաշտօնէից և այլ բազմութիւ հասարակաց պաշտօնէից անուանման համար միայն Նախագահին հասանութիւնը բաւական չէ և պէտք է որ ծերակուտն ալ իր կամբը յայտնէ :

Իրերակուտի անդամք երեսփոխանաց նման 25,000 Փո. տարեկան թոշակ կ'ընդունին և ճանապարհորդելու ազատութիւն :

Ամերիկեան ծերակոյտը՝ ընտրեալ յերեսփոխանաց այլ և այլ գաւառաց՝ ընդհանրապէս պահպանողական պաշտօնեական մօտք մին մ'է . բազմաթիւ անգլիացի տնտեսագէտք մեծ դարմանք կը խօսին այս տեսակէտով . Լորտ Սալիզբորի զայն կ'անուանէ « զարմանալի ազդեցութեամբ և զօրութեամբ » և իր հայրենեաց ալ նըման հաստատութիւն մը կը մտադրէ :

Խորհրդարանէն և ծերակուտէն ալ աւելի վեր մասնաւոր ատերիկեան հաստատութիւն մը կայ . բարձրագոյն Ատեանս . Այս Ատեանը կը ձեւանայ ինն գաւառորներէ՝ որք ցկեանս ընարուած են . եթէ այս գաւառորներէն մին մեռնի՝ Նախագահը ծերակուտի ժողովոյն կ'առաջարկէ նորա յաջորդը . այս յաջորդը առանց հաստատութեան ծերակուտին չի կրնար ընտրուիլ :

Ամէն գաւառուոր տարեկան 50,000 Փո. թոշակ կ'ընդունի . որ շատ բան մը չէ քաղգոտմամբ անգլիացի գաւառուորաց հոխ թոշակին : Բարձրագոյն Ատեանը՝ պաշտօն Թնի քննելու Համաժողովոյն (խորհրդարան և ծերակոյտ) քուէարկած բոլոր օրէնքները, պաշտօնական անուանմունքը, Նախագահին վճիռները, և իշխանութիւն ունի ջնջելու և ոչնչացնելու այն ամէն օրէնք և վճիռք՝ որ հակառակ են ամերիկեան սահմանադրութեան : Ինչպէս կը տեսնուի՝ այս բարձրագոյն ատենին իշխանութիւնը շատ մեծ է, և ծերակուտին հետ միացած՝ Միացեալ Նահանգաց օրէնդրական դրութեան բացարձակապէս պահպանողական դրոյմ մը կու տայր Պէտք է յաւելույ որ պատերազմի յայտարարութիւնը՝ Համաժողովը պիտի հրատարակէ և Նախագահը վաւերացունէ :

Այսչափս բուսական է ազգային օրէնդրական իշխանութեան համար . գործադրական իշխանութիւնը կը ներկայացնէ Նախագահն՝ որ չորս տարուան համար կ'ընտրուի . իւր ընտրութիւնը հետեւեալ կերպով կը կատարուի . ամէն գաւառ կ'ընտրէ, մեծամասնութեան համասնութեամբ, որոշեալ թիւ մը ընտրողներու քառ համեմատութեան իր քնակչաց . ընտրողք ամէն գաւառներէն կը ժողովուին և միաբան կ'ընտրեն իրենց Նախագահը : Սահմանադրութեան հիմնադիրք այս տնով փափագեցան միջնորդաբար ընտրել տալ տէրութեան Նախագահը, սակայն շատ տարի է ընտրողք անօգուտ պաշտօն մը կը վարեն . վասն զի ստիպեալ են զիրենք ընտրող խառնիճապանճին կամաց հպատակիլ, որով այժմ Նախագահին ընտրութիւնը՝ գրեթէ ուղղակի ժողովրդեան ձեռք կը կատարուի :

Նախագահը՝ թէ քաղաքական բառային գաւառորն է . Է թէ

բարձրագոյն հրամանատար յամալքային և ծովային զինուորու-
թեանց :

Նախագահը բացասական քուէի մը իշխանութիւն ու նի՛ ընդ-
դէմ ամենայն օրինաց Համաժողովոյն, բաց յանոնց՝ որք անդամոց
երկու երրորդին մեմածանութեամբ քուէարկեալ են : Ըստ կամն
կրնայ ընտրել կամ նորոգել իւր պաշտօնատան անդամները, որք
պարզապէս անտեսական պաշտօնեայք են, և ոչ երբէք կը մասնա-
կցին խորհրդարանի կամ ծերակուտի նիստերուն : նախագահին
պաշտօնական կեդրոնավայրն է՝ ի Ռուշինկըն Սպիտակ Տուն կու-
չուած ապարանքը, և տարեկան 250, 000 ֆռ. թոշակ կ'ընդունի :

Համաժողովը և նախագահը ընդհանուր դաշնակցութեան խըն-
դրովք կ'զբաղին : Իսկ իւրաքանչիւր գաւառաց մասնական գոր-
ծերը՝ մասնական կառավարութիւնք կը կարգադրեն : ամէն գա-
ւառ առանձին ներկայացուցչաց խորհրդարան մը, ծերակոյտ մը,
կառավարիչ մը, դատաստանարան և առանձին զինուորութիւն
մ՛ ունի, և բացարձակապէս անկախ է իւր մասնական գործառնու-
թեանց շրջանակին մէջ :

Շարունակելի

ՌԱՄԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԴԱՄԱՆԴԻՔ

Կրէնթ Ալլէն նշանաւոր բնապատմագէտ և մատենագիր, կը
պատմէ որ մի անգամ երբ ինքը քանի մը օտարականաց հետ կը
ճանապարհորդէր Նեղոս գետին վրայ՝ ամերիկուհի մը յանկար-
ծակի ձեռնոցները հանեց : Իւր սպիտակ փղբրիկ ձեռքերուն վը-
րայ տաս տասուերկուքի չափ աղամանդեր կը փայլէին : Կրէնթ
Ալլէն զայս տեսնելով՝ զարմացաւ, և այս առթիով քանի մը խորհրդ-
դածութիւններ կ'ընէ այն կերպին վրայ՝ որով իւրաքանչիւր ոք
պէտք է ըմբռնէ հարստութեան գործածութիւնը՝ բաղդատմամբ
ընկերութեան մէջ ունեցած իւր պարտուց կամ դասակարգին :

Նախ և առաջ ինքը կը հաստատէ որ աղամանդները ըստ ին-
քեան ամենեւին արժէք մը չունին : Այս պարագային յարմար պատ-
մութիւն մը կը պատմուի Լոնտրայի 1862 ին աշխարհահանդիսէն,
որ եթէ ճիշդ ալ չէ՝ սակայն շատ գիւտաւոր է և յարմար հեղինակ
կին գաղափարին : « Ինչպէս ամէնքը կը իշխեն՝ գոնիկոնք աղա-
մանդը այն աշխարհահանդիսին մէջ՝ ի ցոյց դրուեցաւ բիւրեղեայ
փեղկի մը մէջ, և յանձնուեցաւ ոստիկանութեան արթմուն հսկու-
ղութեան : Ժողովուրդը մի առ մի ընդունուեցաւ՝ որպէս զի իբր
անյազ աչաց փափագը յազեցնէ այն փայլուն քարին շողերէն :